Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2007թ. դեկտեմբերի 18-ին ժամը 15:00-ին
կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Հովիկ Աբրահամյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վարդան Խաչատրյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար
Անդրանիկ Մանուկյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Դավիթ Լոքյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Կարեն Նազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ
Հրաչիկ Ջավադյանը	Կիրառական հետազոտությունների և ագրոբիզնեսի հիմնադրամի գործադիր տնօրեն

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Մայրոն Հիրնիակը	Կառավարման Խորհրդի դիտորդ, Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրենի տեղակալ

Նիստից բացակայում էր.

Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ
Դավիթ Ավետիսյանը	ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նազելի Վարդանյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Գայանե Հարությունյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի գործերի կառավարիչ
Շուշանիկ Աղաբաբյանը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի թարգմանիչ
Լևոն Մարտիրոսյանը	ՀՀ վարչապետի օգնական
Սիմոն Ղոնաղչյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Մերի Հարությունյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ

Նիստը բացեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը՝նշելով, որ այն 2007թ. եզրափակիչ նիստն է:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը շնորհավորեց բոլոր ներկաների գալիք Նոր տարին՝ մաղթելով, որ 2008թ. լինի գործունեության լավ և արդյունավետ տարի բոլոր առումներով և հատկապես իրականացվող ծրագրի մասով:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը ներկաներին առաջարկեց ի մի բերել մեկ տարվա ընթացքում իրականացված աշխատանքը, որը վերջինիս կողմից գնահատվում էր դրական և միաժամանակ շատ կարևոր՝ հատկապես չորս առումներով.
Առաջին. Ծրագրի իրականացման համար հատկացված է լուրջ գումար, որը էական ազդեցություն կունենա երկրի զարգացման գործում,
Երկրորդ. Ծրագրի շրջանակներում լուծվում են գյուղական զարգացման խնդիրները, որը համահունչ է տարածքների հավասարաչափ զարգացման՝ պետության որդեգրած քաղաքականությանը,
Երրորդ. Ծրագիրը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական և վարկանիշային նշանակություն ունեցող ծրագիր է, որին կարող են մասնակից լինել ցանկություն հայտնած ոչ բոլոր, այլ միայն զարգացման որոշակի աստիճանի հասած պետությունները, ինչը վկայում է այն մասին, որ մեր պետությունը զարգանում է ժամանակին համահունչ և զարգացումն ընթանում է այն ճանապարհով, որով զարգանում են մի շարք առաջադեմ պետություններ,
Չորրորդ. Ծրագիրը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետություն ներմուծել աշխատանքային նոր մշակույթ, մասնավորապես կապված ծրագրի կառավարման և իրականացման, ինչպես նաև գնումների գործընթացի անցկացման հետ:

ՀՀ Վարչապետն ամփոփեց մեկ տարվա ընթացքում իրականացված աշխատանքները: Մասնավորապես նշվեց, որ կարելի է ամրագրել այն փաստը, որ ուսումնասիրության նախնական փուլն հաջողությամբ հաղթահարվել է և սկսվել է կոնկրետ աշխատանքների իրականացումը, որը հնարավորություն է ընձեռում մեր ժողովրդին արդեն իսկ տեսնելու ծրագրի շոշափելի արդյունքները: Կարևոր է նաև այն, որ առկա են նոր համագործակցության ուղիներ. վերջերս Հազարամյակի մարտահրավեր կորպորացիան հաստատել է 2008թ. Հայաստանի Հանրապետության մասնակցության հարցը, որը նշանակում է, որ մեր տնտեսությունը զարգանում է նորմալ: Վաշինգթոնում ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանի և ՀՄԿ գլխավոր գործադիր տնօրեն Ջոն Դանիլովիչի միջև կայացած հանդիպման ժամանակ խոսվել է նոր՝ 2-րդ ՀՄԿ ծրագրի ստացման հնարավորության մասին: Բացի այդ ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը մատնանշեց, որ մենք պատրաստ ենք նոր մարտահրավերների, քանի որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունը դասվում է միջին եկամուտներ ունեցող երկրների շարքին, որը ստիպում է մեզ ավելի լավ աշխատել:

ՀՀ Վարչապետը չխոսեց առկա թերությունների մասին, միաժամանակ նշելով, որ դա չի վկայում այն մասին, որ թերություններ չկան, այլ պարզապես անհրաժեշտ է թերությունների մասին ոչ թե բարձրաձայնել, այլ միջոցներ ձեռնարկել դրանց վերացման ուղղությամբ, իսկ հաջողությունների մասին պետք է խոսել և դրանից չամաչել:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոքյանը հայտնեց, որ որոշ գյուղացիներ արդեն իսկ ծրագրի շրջանակներում օժանդակություն են ստացել, որն էլ նպաստել է նրանց եկամուտների էական աճին: Նախարարն առաջարկեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել տեղեկատվություն այդ հարցի շուրջ:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն ավելացրեց, որ այս հարցի լուսաբանման համար անհրաժեշտ է համատեղ աշխատանքներ տանել մամուլի հետ:

Ծրագրի արդյունքների ամփոփումից հետո «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ, ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն անդրադարձավ նիստի օրակարգին:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 6-րդ Հատկացման հայտի և դրան կցվող փաստաթղթերի քննարկում և հաստատում:
2. Խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար առաջարկների ներկայացման հրավերի տիպային ձևի քննարկում և հաստատում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Առաջին փաթեթի շինարարական աշխատանքների վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների մրցույթի համակցված տեխնիկա-ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի, RRRP-CW-03/2007 1-6 Լոտերով նախատեսված վերականգնման աշխատանքներն իրականացնող կապալառուների ձեռք բերման մրցութային փաստաթղթերի քննարկում և հաստատում:
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի աուդիտի իրականացման համար աուդիտորական ընկերության հետ կնքվելիք պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
6. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի ֆինանսական գործակալի հետ կնքվելիք պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
7. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Ոռոգման ութ ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
8. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում իրականացվող Առաջին փաթեթի շինարարական պայմանագրերի տեխնիկական աուդիտի իրականացման համար անհատ խորհրդատուի ընտրության կարճ ցուցակի քննարկում և հաստատում:
9. Այլ հարցեր.

   ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միջև կնքված պայմանագրում կատարվելիք փոփոխությունների քննարկում և հաստատում,

   բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» WM/IS-06/005 խորհրդատվական մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքների քննարկում և հաստատում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ <u>միաձայն</u> որոշվեց՝ հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 6-րդ Հատկացման հայտը և դրան կցվող փաստաթղթերը:

Օրակարգի 2-րդ հարցի վերաբերյալ արտահայտվեց ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանը: Վերջինս նշեց, որ ՀՀ դրամ/ ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանման ռիսկերի ծածկման պարտականությունը հնարավոր չէ թողնել ՀՀ պետական բյուջեի միջոցների վրա:
Նախարարն առաջարկեց հարցի լուծման երեք տարբերակ.
Առաջին. Պայմանագրի կնքումից հետո պայմանագրի ամբողջ գումարը ստանալ ՀՄԿ-ից և, փոխարկելով այդ օրվա փոխարժեքով, պահել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հատուկ հաշվի վրա,
Երկրորդ. Տարեկան կտրվածով եռամսյակային բաշխվածությամբ ստացվելիք գումարները փոխանցել ՀՀ Կենտրոնական բանկում գտնվող ՀՀ հաշվին, տվյալ տարվա պետական բյուջեի փոխարժեքով փոխարկել ՀՀ դրամի և փոխանցել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի՝ առևտրային բանկում գտնվող հաշվին: Ճիշտ է այս պարագայում ՀՀ պետական բյուջեն ևս վնասներ է կրում, սակայն դրանք ավելի փոքր են և կարող են ծածկվել ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին,
Երրորդ. Համաշխարհային բանկի ծրագրերով կիրառվող տարբերակը, այն է՝ ի սկզբանե կրճատել ծրագրով իրականացվելիք միջոցառումների շրջանակը և նախատեսված գումարների 8-10%-ը սահմանել որպես պահուստային ֆոնդ:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը նշեց, որ Լինսի ծրագրի պարագայում ՀՀ պետական բյուջեից միջոցների տրամադրումը եղել է պարտադրված և նմանատիպ տարբերակի կիրառումը ներկայումս անհնար է նաև ևս մեկ պատճառով: Ըստ էության Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան ծրագրի շրջանակներում վերջին որոշման իրավունքն ըստ էության պատկանում է ՀՄԿ-ին, փաստորեն ՀՀ պետական բյուջեից միջոցների հատկացման պարագայում ստացվում է, որ ՀՄԿ-ն է որոշում, թե ինչպես պետք է ծախսվեն ՀՀ պետական բյուջեի միջոցները:

Ամփոփելով ասվածը ՀՀ Վարչապետն առաջարկեց ՀՄԿ-ի հետ քննարկել երկու տարբերակ. Առաջին. Գումարները ՀՀ պետական բյուջեով անցկացնելու տարբերակը և երկրորդ. պահուստային ֆոնդ ունենալու տարբերակը:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը կատարեց հարցադրում՝ ՀՄԿ-ի առաջարկած բանաձևի ընդունելի լինելու վերաբերյալ, որին պատասխանեց ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը՝ նշելով, որ միանշանակ առաջարկված բանաձևն անընդունելի է, քանի որ դրա ամրագրումը կնշանակի, որ կամ ՀՀ Կառավարությունն ընդունում է, որ Հայաստանի Հանրապետությունում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանում չի լինելու, կամ էլ արհեստականորեն ստեղծում է իրավիճակ, որը կհանգեցնի կապալառուների սնանկության:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ՀՄԿ-ն ելնում է այն տրամաբանությունից, որ եթե ի սկզբանե մրցութային փաթեթում ամրագրվում է այս դրույթը, ապա նշանակում է, որ կապալառուն հնարավորություն ունի հաշվարկելու իր ռիսկերը և ներկայացնելու համապատասխան գնային առաջարկ:

ՀՀ Վարչապետը հայտնեց, որ ՀՀ Կառավարությունը պարտավոր է հոգալ տեղական ընկերությունների մասին, քանի որ կապալառուն կարող է անմտածված քայլ անել, որը հանգեցնի սնանկության, իսկ ՀՀ Կառավարությունը ցանկանում է ունենալ մրցունակ շուկա, բացի այդ այս կարգով գներն արհեստականորեն բարձրացվում են: Միաժամանակ ՀՀ Վարչապետը նշեց, որ այս տարբերակով ՀՄԿ-ն ոչինչ չի շահում, քանի որ բարձր գների դեպքում ևս միջոցները չեն բավականացնելու բոլոր ծրագրերի իրականացման համար, որից էլ հետևում է, որ ավելի նպատակահարմար է ի սկզբանե ունենալ պահուստային միջոցներ, ինչպես արվում է Համաշխարհային բանկի դեպքում:

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի անդամ Արայիկ Հովհաննիսյանը նշեց, որ որպեսզի լրատվամիջոցներում թյուրիմացություն չառաջանա, անհրաժեշտ է փաստել, որ անկախ բոլոր հանգամանքներից ծրագրով

նախատեսված բոլոր միջոցառումներն ըստ էության կիրականացվեն՝ լինի դա Հազարամյակի մարտահրավեր-Հայաստան ծրագրի, թե ՀՀ պետական բյուջեի միջոցներով:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հաստատեց Արայիկ Հովհաննիսյանի մեջբերումը:

Քննարկումների արդյունքում **միաձայն որոշվեց՝** հանձնարարել ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ին ՀՄԿ-ի հետ քննարկելու խնդրի լուծման համար առաջարկված երկու տարբերակները և արդյունքների մասին տեղեկացնել Կառավարման խորհրդին:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի «Առաջին փաթեթի շինարարական աշխատանքների վերահսկողություն» խորհրդատվական ծառայությունների մրցույթի համակցված տեխնիկա-ֆինանսական գնահատման արդյունքները:

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ առաջարկություն ներկայացրեց ՀՀ տրանսպորտի և կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը: Վերջինս նշեց, որ փաթեթում ներկայացված նախաորակավորման չափանիշներում արտացոլված պահանջները, որոնք վերաբերում են վերջին հինգ տարիներում իրականացված շինարարական աշխատանքների ծավալներին, չափազանց բարձր են և դա կարող է հանգեցնել մասնակից ընկերությունների ցանկի կրճատման, ուստի անհրաժեշտ է նվազեցնել պահանջված ծավալները:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հարցրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանին, թե ինչ սկզբունքով են իրականցվում այդ հաշվարկները և արդյոք հնարավոր է այդ սանդղակն իջեցնել:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ հաշվարկները կատարում է Հայավտոճան տնօրինություն ՊՈԱԿ-ը ՝ համաձայն ընդունված կարգի և մեթոդների, սակայն չի բացառվում նվազման հնարավորությունը:

ՀՀ Վարչապետն առաջարկեց այնպիսի չափանիշներ սահմանել, որ մրցույթին մասնակցեն առնվազն 3-4 ընկերություններ և ապահովվի մրցակցություն:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարը միաժամանակ առաջարկեց նաև իջեցնել մասնակից ընկերությունների համար սահմանված դեբետային ակտիվների սանդղակը: Նախարարը նշեց նաև, որ մրցութային փաստաթղթերում նշվում է, որ մրցույթի լեզուն անգլերենն է: Վերջինս առաջարկեց որպես մրցույթի լեզու սահմանել նաև հայերենը:

Սակայն ՀՀ Վարչապետը փաստեց, որ նմանատիպ թարգմանության կատարումը կապված է մեծ ծախսերի հետ, ուստի աննպատակահարմար է:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոքյանը նշեց, որ եթե ներկայացված սանդղակը չիջեցվի, ապա ընդամենը երկու ընկերություններ կհաղթեն բոլոր լոտերը:

Արա Հոսեփյանը հարցրեց Կառավարման խորհրդի անդամներին, արդյոք չեն կարծում, որ նմանատիպ չափորոշիչների սահմանումը խթան է միջազգային կազմակերպությունների ընդգրկման համար:

ՀՀ Վարչապետը կասկածի տակ դրեց այն, որ մի քանի միլիոն ԱՄՆ դոլարը կարող է հետաքրքրել լուրջ միջազգային ընկերություններին, քանի որ շինարարական տեխնիկայի տեղափոխումը բավականին ծախսատար է:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար Վարդան Խաչատրյանն առաջարկեց չփոխել չափորոշիչները, որպեսզի մրցույթին մասնակցեն միայն բարձր որակավորում ունեցող ընկերությունները, այդ թվում նաև՝ միջազգային:

ՀՀ Վարչապետն առարկեց՝ նշելով, որ առ այսօր հայտարարված մրցույթներով որևէ միջազգային շինարարական կազմակերպություն հետաքրքրված չի եղել:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի, RRRP-CW-03/2007 1-6 Լոտերով նախատեսված վերականգնման աշխատանքներն իրականացնող կապալառուների ձեռք բերման մրցութային փաստաթղթերը, սակայն պայմանով, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ համատեղ քննարկի սահմանված չափորոշիչների նվազեցման հարցը:

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի աուդիտի իրականացման համար աուդիտորական ընկերության հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ հարցադրում կատարեց «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի անդամ Աշոտ Ոսկանյանը: Վերջինս նշեց, որ ֆինանսական գործալի հետ կնքվելիք պայմանագրում ամրագրված է, որ ֆինանսական գործակալը ներկայացնում է մի շարք հաշվետվություններ, սակայն ամրագրված չէ, թե ով է իրականացնում այդ հաշվետվությունների գնահատում:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը պարզաբանեց, որ ըստ էության դա երևում է Ծրագրի աուդիտի արդյունքներից:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանն ավելացրեց, որ ֆինանսական գործակալի կատարած աշխատանքի վերաբերյալ գնահատականներն արտացոլվում են տարեկան աուդիտի արդյունքներում և ՀՄԿ-ի գլխավոր տեսուչի ներկայացրած կարծիքում:

Աշոտ Ոսկանյանը առաջարկեց, որպեսզի Կառավարման խորհրդին տարեկան կտրվածքով տեղեկատվություն ներկայացվի ֆինանսական գործակալի գործունեության վերաբերյալ, քանի որ ֆինանսական գործակալն իրականացնում է Ծրագրի համար որոշիչ նշանակություն ունեցող գործունեություն:

Արա Հովսեփյանն առաջարկեց արձանագրությամբ ամրագրել այդ դրույթը և սահմանել, որ տարեկան կտրվածով «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհուրդ կներկայացվի տեղեկատվություն ֆինանսական գործակալի գործունեության վերաբերյալ:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանը հավանություն տվեց այդ դրույթի արձանագրմանը:

Քննարկումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի ֆինանսական գործակալի հետ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 7-րդ հարցի քննարկման ընթացքում հարց բարձրացվեց Կառավարման խորհրդի անդամ Արայիկ Հովհաննիսյանի կողմից, մասնավորապես անհանգստություն արտահայտվեց այն հարցի շուրջ, որ պայմանագրի տևողությունը նախատեսվում է 52 ամիս, ուստի այս պարագայում ևս կարող է առաջանալ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանման խնդիրը:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ Առաջարկների ներկայացման հրավերի տիպային ձևի վերաբերյալ ՀՄԿ-ի հետ վերջնական պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո այդ դրույթը կամրագրվի նաև այս պայմանագրում:

ՀՀ Վարչապետ Սերժ Սարգսյանն առաջարկեց լուծել Առաջարկների ներկայացման հրավերի տիպային ձևի վերաբերյալ առկա հարցը և դրա հիման վրա կնքել տվյալ պայմանագիրը:

Պարզաբանումներից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Ոռոգման ուբ ինքնահոս համակարգերի կառուցման նպատակով վերջնական նախագծում և շինարարության վերահսկում» պայմանագրի նախագիծը՝ պայմանով, որ Առաջարկների ներկայացման հրավերի տիպային ձևի վերաբերյալ վերջնական որոշումը կարտացոլվի նաև այս պայմանագրում:

Օրակարգի 8-րդ հարցի վերաբերյալ միաձայն որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագրի շրջանակներում իրականացվող Առաջին փաթեթի շինարարական պայմանագրերի տեխնիկական աուդիտի իրականացման համար անհատ խորհրդատուի ընտրության կարճ ցուցակը:

Օրակարգի 9-րդ հարցի

ա/ կետի վերաբերյալ հարցադրում կատարեց ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ Սիմոն Ղոնաղչյանը: Վերջինս նշեց, որ հարցի վերաբերյալ ներկայացված տեղեկանքի վերջում նշված է, որ հաշվարկները կատարելիս հաշվի են առնվել նաև ԱՄՆ դոլարի հնարավոր արժեզրկումները, ուստի խնդրեց պարզաբանել, թե ինչ կարգով են կատարվել այդ կանխատեսումները:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանն ընդունեց, որ տեղեկանքի վերջում նշված պարզաբանումը հարկավոր է հանել:

Պարզաբանումից հետո **միաձայն որոշվեց** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության միջև կնքված պայմանագրում կատարվելիք փոփոխությունները:

բ/ կետին անդրադառնալուց առաջ շահերի բախումից խուսափելու նպատակով նիստերի դահլիճից դուրս եկավ Կառավարման խորհրդի անդամ Հրաչիկ Ջավադյանը:

Հարցի վերաբերյալ հարցադրում կատարեց ՀՀ գյուղատնտեսության նախարար Դավիթ Լոքյանը: Նախարարը խնդրեց պարզաբանել արդյոք հաղթող ճանաչված ընկերության ներկայացրած գինը թույլ կտա ընկերությանն իրականացնել պահանջվող աշխատանքներն ամբողջ ծավալով:

Արա Հովսեփյանը պարզաբանեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի հաշվարկներով աշխատանքների իրականացման մոտավոր գինը մոտ է ընկերության ներկայացրած գնային առաջարկի գումարին, բացի այդ չափազանց ուռճացված է թվում երրորդ տեղում գտնվող ընկերության ներկայացրած գնային առաջարկը:

Պարզաբանումից հետո **միաձայն** /9 կողմ, դեմ/ձեռնպահ չկար/ **որոշվեց** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի «Ջրից դեպի շուկա» բաղադրիչի «Ոռոգման կառավարման կազմակերպությունների կարողությունների ամրապնդում» WM/IS-06/005 խորհրդատվական մրցույթի համակցված տեխնիկական և ֆինանսական գնահատման արդյունքները:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյան